## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ՝

## ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

# ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ

## ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ս. Էջմիածնի միաբանությունը, հոգևոր դասը և հավատացյալ ժողովուրդը սրտի խորին վշտով լսեցին պաշտոնական հաղորդումը Սովետական Միության Մինիստրների խորհրդի Նախագահ՝ Գեներալիսիմուս Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի անակնկալ լուրջ հիվանդության մասին։

Հրահանգվում է Ձեզ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի՝ հայ ժողովրդի լավագույն բարեկամի, ազատարարի և հովանավորողի ապաքինման համար մատուցանել սուրբ պատարագ և կատարել առողջության մաղթանք։

ԳԵՈՐԳ Զ.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ